Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի
օգոստոսի 5-ի N 498 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՊՆԱԿ ՄԸ ԿԵՐԱԿՈՒՐ»

1.	Ծրագրի նպատակը	Ցուցաբերել սոցիալական և հոգևոր աջակցություն Արմավիրի մարզի 4 գյուղերի և Վաղարշապատ քաղաքի սոցիալապես անապահով միայնակ մեծահասակներին:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Ծրագրի շրջանակներում, ՀՀ օրենքով սահմանված կարգով, նախատեսվում է օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ քաղաքացիներ, Կալիֆոռնիա նահանգի Սիլ Բիչ քաղաքի բնակիչներ, ամերիկահայ բարեգործներ տեր և տիկին Ղազարյանները և նրանց ընտանիքը Սեթա - Յունիս Ղազարյան Ենովքի (անձնագրի N AA0002802, տրված է 21.10.2013 թ. 02-ի կողմից) Ջուրաբ-Բարսեղ Ղազարյան Բարսեղի (անձնագրի N AA0002801, տրված է 21.10.2013 թ. 02-ի կողմից)
4.	Ծրագիրը կատարողը	«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ, իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Չարենցի 58-5, գործող հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Պտղունք, Վարդանանց 1, հեռ.՝ 043 500 503, 0 դրամ սակագնով թեժ գիծ՝ 20-80, ՀՎՀՀ 01557357
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արմավիրի մարզ, Պտղունք գյուղ, Վարդանանց 1, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	$ 11734 տասնմեկ հազար յոթ հարյուր երեսունչորս ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Արմավիրի մարզի 4 գյուղերի (Փարաքար, Արևաշատ, Մուսալեռ, Պտղունք) և Վաղարշապատ քաղաքի սոցիալապես անապահով մեծահասակները (36 հոգի)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Արմավիրի մարզի Պտղունք գյուղում `Վարդանանց 1 հասցեում,գործում է «Պնակ մը կերակուր» ծրագիրը, որի շրջանակում սոցիալապես անապահով միայնակ մեծահասակներին տրամադրվում է՝ 1. Հյուրասիրություն (լիարժեք սնունդ)՝ շաբաթական 2 անգամ $6000 (վեց հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ) 2. Նյութական օգնություն ՝ հագուստ, կոշիկ, կենցաղային պարագաներ $2834 (երկու հազար ութ հարյուր երեսունչորս ԱՄՆ դոլարին համարժեք դրամ) 3. Միայնակ մեծահասակների տեղափոխում Արմավիրի մարզի Պտղունք գյուղ և հակառակը (անվճար իրականացվում է հիմնադրամի մեքենայով) 4. Աստվածաշնչի սերտողություն (Փարաքարի Սուրբ Աստվածածին եկեղեցու քահանայի մասնակցությամբ անվճար) 5. Արտերկրից կոնտեյների փոխադրման ծախսերը կազմելու են $700 (յոթ հարյուրԱՄՆ դոլարին համարժեք դրամ) 6. Ավտոմեքենայի շահագործման ծախս՝ $2200 (երկու հազար երկու հարյուր ԱՄՆ դոլարին համարժեք դրամ) Վերոնշյալ միջոցառումներն իրականացվելու են 2019 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	2019 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ը ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում է՝ 1. Սնանդի ձեռքբերում ՀՀ տարածքում՝ $ 6000 (վեց հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ) 2. Հագուստ, կոշիկ, կենցաղային պարագաներ (ներմուծում արտերկրից) $2834 (երկու հազար ութ հարյուր երեսունչորս ԱՄՆ դոլարին համարժեք դրամ)3.Ավտոմեքենայի շահագործման ծախս՝ $2200 (երկու հազար երկու հարյուր ԱՄՆ դոլարին համարժեք դրամ) 4. Արտերկրից կոնտեյների փոխադրման ծախսերը կազմելու են $700 (յոթ հարյուր ԱՄՆ դոլարին համարժեք դրամ)
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	2019 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ը կազմակերպական ծախսերը կազմում են՝ 1. Ավտոմեքենայի շահագործման ծախս՝ $2200 (երկու հազար երկու հարյուր ԱՄՆ դոլարին համարժեք դրամ)
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն սոցիալական աջակցության տարածքային մարմիններ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ սփյուռքահայեր, անհատ բարեգործներ

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հոգաբարձուների խորհրդին հաշվետվությունների ներկայացում՝ ծրագրերի իրականացման վերաբերյալ, ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ին N 66 - Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում՝ լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ